

## «ԱՋԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

### Ընկերության հետագա զարգացման խնդիրները և նպատակները

**Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության հետագա զարգացման խնդիրները և նպատակները հետևյալն են.**

- Ընկերությունը կշարունակի իր հիմնական գործունեությունը՝ գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված բնակարանային հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը:

- Ըստ կանխատեսումների, Ընկերության վարկային պորտֆելը 2019թ.-ին կաճի մոտ 10%-ով՝ կազմելով մոտ 46 մլրդ ՀՀ դրամ: Այդ ժամանակահատվածում Ընկերությունը նախատեսում է վերաֆինանսավորել գործընկեր բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից բնակչությանը տրամադրվելիք ավելի քան 1,900 վարկ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում:

- Իր գործունեության ծավալները մեծացնելու և հիփոթեքային վարկավորումը աշխուժացնելու նպատակով Ընկերությունը միջոցներ կձեռնարկի ընդլայնելու իր գործընկերների ցանկը, ինչպես նաև կիրականացնի բնակչության իրազեկման

միջոցառումներ՝ շեշտադրելով ՀՀ մարզերը:

- Իր գործունեության ֆինանսավորման նպատակով Ընկերությունը կօգտագործի ինչպես ներկայում իրեն հասանելի միջոցները (սեփական միջոցներ, Ֆրանսիական զարգացման գործակալության հետ կնքված վարկային գիծ, Սևծովյան առևտրի և զարգացման - Black Sea Trade & Development Bank (BSTDB) բանկի, Գերմանական KfW բանկի հետ կնքված վարկային գծեր), այնպես էլ պարտատոմսերի թողարկումից և տեղաբաշխումից ստացված միջոցները: Մասնավորապես, 2019 թվականի ընթացքում Ընկերությունը նախատեսում է տեղաբաշխել մոտ 3.5 միլիարդ ՀՀ դրամի պարտատոմսեր: Հաշվի առնելով տնտեսության առկա իրավիճակը և հնարավոր ներդրողների կողմից ներկայացվող պահանջարկը՝ կանխատեսվող ժամանակաշրջանում Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը կլինեն մեկից մինչև հինգ տարի մարման ժամկետով:

Միևնույն ժամանակ, Ընկերությունը նախատեսում է քայլեր ձեռնարկել արտաքին այլ աղբյուրներից (միջազգային զարգացման գործակալություններից) դրամական միջոցների ներգրավման ուղղությամբ՝ նպատակային ծրագրեր իրականացնելու նպատակով:

Ինչպես և հիմնադրման օրվանից, Ընկերության ռազմավարությունն ուղղված է լինելու խելամիտ և կառավարելի ռիսկայնության և շահութաբերության համակցությանը: